

փախչել, չենք ուզեր, չենք ուզեր—ի գոռում- ներ, գոչումներ—ով չէք ուզեր կազմակերպել անդին: Չենք ուզեր փախազանք, չենք ուզեր Մատթէոս եպիսկոպոսը, չենք ուզեր որ ասոնք երևափոխան ըլլան:—Յարձակողաց առաջնորդը պ. Գուլազաշ, վիժիարի սեղանաւոր մը, կը նըշ- մարէ փախազանքը, կը յարձկի վրան, կը բռնէ վիզէն և ունի վզէնը գրպանէն հանելով կը գնէ փախազանի կուրծքին, շուտ հրաժարա- կանք: մի քանի ուժեղ և արթուն անձինք կը գիտեն Գուլազաշի վրայ, կը յափշտակեն ու է- վով վզէնը ձեռքերէն, կուզեն փախազանը փախցնել, դռները փակուած են: Մշեցիները կը հասնեն, փախազան Մշոյ երևափոխան է. մշե- ցիներու գլուխը փախազանի պաշտպան է, կու- ղէ Գուլազաշը կտոր կտոր ընել զարկեցէք տը- դաք» կը պոռայ, մշեցիները չեն գիտեր որու զարնեն և սխալմամբ կը սկսեն հարուածները փախազանի տեղը: դուրսէն վտրիկ դուռ մը կը յաջողեն բանալ և փախազանը փախցնել:— Այս միջոցիս թիւրք զինուորները կը հասնեն, ե- կեղեցին կը պաշարեն, խաղաղութիւնը կը հաս- տատուի, և 40—50 աթուոներու բեկորները դիա- կի տեղ կը ծածկեն պատերազմի դաշտը:

Ինչու չէին ուզեր փախազանը: Պ. փախա- ղան Ազգ. ժողովոյ մէջ Ս. Պատրիարքի և Ազգ. վարչութեան գործերն քննադատողներուն պա- ռազուխն էր: Վնասաբարութիւններն երբեմն խիստ կը ըլլային և խորհրդարանակա՞ն կենաց ան- վարժ ժողովուրդի մը համար քննադատութիւնը ամբաստանութիւն կը սեպուի: Այսպէս համա- զում մը գոյացած էր թէ պ. փախազան պատ- րիարքի անկումը կուզէ: Երևակայութիւնները օրըստօրէ կը տաքան, և սա հետևութիւնը կը հանեն թէ պ. փախազան Բ. Գրան գործիքն է պատրիարքը տապալելու համար: Այս յիմար և անտեղի կտակածը շատ մտքերու մէջ կը տե- ղաւորուի և աղբ արդիւնքը կը ըլլայ յուլիսի 4-ի դէպքերը: Գարձաւ անհին և անտեղի կաս- կածներ Մատթէոս եպիսկոպոսի վրայ, իբր թէ կաթողիկոսն և Մանկունիէն կը ներշնչուի Ներ- սէսի դէմ: Սակայն Բնու մտնալ որ փախազան պատրիարքի թախանձանօքն էր որ Բերլին գնաց. Մատթէոս շատ վշտացած էր որ իր պատգամա- լորութիւնը կաթողիկոսի մօտ անպաջող եղաւ: —Ձգնէք այս անիկը կասկածները. դարմանա- լին այս կէտն էր որ փախազանի և պատրիար- քի յարաբերութիւններն այս վերջին միջոցիս շատ լաւ են. պատրիարքը միշտ կը սիրէ իր հին բարեկամ փախազանը և սա որ ամեն անձէ ա- նկել հմուտ է ազգային գործոց միշտ օգտակար եղած է և պիտի ըլլայ ազգային ղեկավարներուն: Վերջի օրերս փախազանն էր որ համոզիլ փաս- տերով ջանաց համոզել Ներսէս սրբազանը որ իր հրաժարականը ետ առնու:—Այս կէտերը հասարակութիւնէն շատերուն անծանօթ ըլլալով, կուրուխանք յուլիս 4-ի յարձակումը ըրին:

Ամենքը գիտեն թէ պատրիարքը չը կրնալով գիմանալ Բ. Գրան ըրածներուն, հրաժարականը կուտայ. հարստահարութեանց համար գրած թաքիւրն էր և ոչ իսկ կը բանան կը կարգան եղեր շատ անգամ:—Թէ ապա Ներսէսը ալ կը հասցնենք թէ Բնու պատրիարքին կը հրաժարի, միթէ խեղացութիւն է ելլել այդ հրա- ժարականի այնպիսի կեղեքանքներ տալ որ ներքին պատճառներու վերաբերի և բոլոր իր զօրութիւնը կորսնցնէ:—Սակայն այս ցաւա- լի դէպքերուն հետևութիւններն ինչ ալ ըլլան, չենք կարծեր որ պատրիարքի հրաժարականի նշանակութիւնը խեղաթիւրեն:

Սրբ սրահը այսքան ալեկանեալ էր, պատուի- թականութիւնը ճամբայ կելլելի ի խոտոզիզ, Ոսկեղ- ջիւրի ափունքներն, ուր պարզ տան մը մէջ ա- ռանձնացեալ է Ներսէս սրբազան: Տաք, կիզիչ օդ մը: Պատուիրակութիւնը եկեղեցին քիչ մը յոգնութիւն առնելէ վերջը կերթայ պատրիար- քի մօտ: Ի դիմաց պատուիրակութեան խօսելու պաշտօն կը տրուի Խորէն Սրբազանի որ եկեղե- ցականաց ներկայացուցիչ կը սեպուի, պ. Մերի- նա-Գուլի որ Ազգ. ժողովոյ ուղղակի ներկա- յացուցիչն է և պ. Գր. Ներսէսանի որ ժողովոյ մեր մեծատանց թարգմանը կրնայ հանդիսանալ: —Պատրիարքը մի առ մի կը բացատրէ այն պատճառները որ կը հարկադրեն զինքն զանէն իջնել, և մասնաւորապէս իր վատառողջ վի- ճակը չը ներքն որ պէտք եղած խնամօքը գոր- ծոց ուղղութիւնը հսկէ: Պատգամաւորութեան կողմանէ խօսողները կը յայտարարեն թէ ըմ- բռնելով հանդերձ թէ Բնու աստիճանի արդար են

Սրբազանի պատճառարանութիւններն, բայց և այնպէս ազգը միաձայնութեամբ ուրիշ զուրն չուզէր իրեն, բայց միայն Ներսէս Սրբազանը: Սրբազանի հրաժարելով արտաքին դժուարու- թիւնները պիտի չը բարձուին: Իսկ վատառող- ջութեան խնդրոյն գայով Ազգ. ժողովը փախազ- յայտնած է որ իսկ մը երկրորդական խնդիրներ ու հողը Սրբազանի վրայէն առնուին: Երկու կողմանէ երկար պատճառարանութիւնէ վերջ Սրբազանը կը յայտարարէ թէ ազգին ընդհա- նուր կամացը առջև պարտաւոր է խոնարհիլ, իր երախտագիտութիւնը կը յայտնէ որ ազգը այսքան համակրութիւն ցոյց կուտայ իրեն և կը յուսայ որ ապագային մէջ իր կամքն անկախ թելութեանցը համար ազգը իրեն ներողամիտ պիտի ըլլար:

Հինգաբլթի երեկոյ շուտ մը տարածուեցաւ այս լուրը և մեծ գոհունակութիւն պատճառեց: Տեղուց բոլոր եւրոպական թերթերը կը հակա- առակէին պատրիարքի հրաժարմանը, այժմ գոհու- թիւն կը յայտնեն:

Այսպէսով Ներսէս գործոց գլուխ կը մնայ վերս- տին, և ապահովութիւն ստացած ըլլալով թէ ժողովուրդը միշտ իրեն նեցուկն է, պիտի կրնայ մեծ հեղինակութեամբ մը խօսել: Ստացած մաս- նաւոր տեղեկութիւններն կը հետեցնեն որ այս անգամ Ներսէս ներքին գործոց մեծ կարեւորու- թիւն պիտի տայ, վարչութեան մէջ ընդունակ և դործող անձինք պիտի մտցնէ և արտաքին քա- ղաքակառուցութեան հետ զօրաւոր կերպով առաջ պիտի մղէ ներքին գործոց բարեկարգութիւնը: Հայաստանի մէջ պէտք եղած առաջնորդներն և ուրիշ կարեւոր անձեր իրկելու հարկն զգալի է: —Լուր տարածուեցաւ թէ Բ. Գուլազ պահանջի է Պատրիարքարանէն որ Խորման և Գարեգին վարդապետ Կ. Պոլիս բերուին իրենց ներկայու- թիւնը վանայ մէջ անախորժ զէպքեր (Գրան համար անախորժ) կրնան յարուցանել ըսելով: «Մասին» այս երեկոյ այս լուրը կը հերքէ:

Հայկակ

ՆԱՄԱԿ ՊՍՐՍՈՒՍԱՆԻՑ

Գալիքէժ, 22 յունիսի 81

Սրբան որ անցեալ անգամ մենք մի քանի խօսքով տխուր ցաւակցութիւն էինք յայտնել մեր Գալիքէժի ազգային գործերի և Արամեան զգրոցի անմիջեմար գրութեան վրա, այս ան- գամ նրա հակառակը պէտք է խօսենք, որովհետեւ ներկայ ամսին մէջ բոլոր փոխկեցաւ, բոլորը լաւ ապագայ են խոստանում և մենք էլ այժմ լողում ենք նորանոր և պայծառ յայտերի մէջ: Ամսոյս սկզբում ազգային ժողով կայացաւ առաջնորդարանում, ուր Գլխորդ սրբազանի աշ- րատութեամբ և նրա ստիպողին աղերսանքնե- իով ընտրուեցաւ մի նոր հոգաբարձութիւն, որ բաղկացած է 7 անուանարար և ազգասէր ան- ձնանքերից: Առանց ցովիսաներ չուայելու մենք այժմից այսքան միայն կատենք, որ մեր նոր- ընտիր հոգաբարձուները փորձառու և խղճմտան- քաւոր մարդիկ լինելով, գիտեն Վարդիւրը կայ- սեր տալ և Աստուծունը Աստուծուն: Նրանք շատ լաւ զգացել են ազգային մանկուոյն դաս- տիարակութեան պէտքը, հայ երեխաներին ճըշ- մարիտ հայութեան և բարուր ուսման մէջ կրը- թելու անհրաժեշտութիւնը, որոնցից կախում է մեր ազգի և հայրենիքի լուստաւոր ապագան, ուստի և անցնելով իրանց պաշտօնի գլուխը, սկսել են մտածել, որպէս զի զպրօցի համար նոր եկամտաներ գտան և նրա նիւթակարը ապահովեն: Եւ որովհետեւ Աւարայրեան օրիոր- դական զպրօցն էլ մօտենում էր իր քայքայմա- նը, վասն որոյ նրան էլ առին իրանց ինամոց տակ, արական զպրօցի հետ միացնելով, Արա- մեան երկուսն զպրօց անուանեցին: Արդէն ու- սուցելներ են վարձում և մի քանիսն էլ նոր պէտք է հրաւիրեն, ինչպէս և մի նոր վարձուհի: Սրբազանի և նոր հոգաբարձութեան ջանքերով այժմ Արամեան զպրօցի հարաւային կողմում կառուցելում է մի նոր շինութիւն, որ պէտք է պարունակէ ազգային ընթերցարանը և մի ըն- արձակ դահլիճ ազգային ժողովարանի և դասա- ղան ազգայնահանդէսների համար. շինութեան ծախքի մի մասը կը վճարէ ընթերցարանը, իսկ մնացորդ մասը կը հոգացիլ հանգանակու- թեամբ: Ենթե՞ն սկսված է և առաջ է գնում. վերջապէս մեր նոր հոգաբարձութեան եռանդը տեսնելով, սիրելի է հաւատալ, որ եթէ նա մի

«Գորդան հանգոցի» չի հանդիպի, մեծամեծ ծառայութիւններ կարող է անել ազգին և իր անունը փառաւորել: Մեր նորընտիր պարոննե- ըն շատ լաւ յայտնի է, որ ամբողջ Արարկատա- կանի հայ ժողովրդի համար Արամեան զպրօցը և նրա հոգաբարձութիւնը լաւաւ և կենաց խնդր է», որովհետեւ ամբողջ Պարսկաստանի հա- յերի մէջ Արամեան զպրօցը մի բացառութիւն է կողմում որպէս մի փարոս, նրանից է միայն սպասվում լոյս և դիտութիւն: Արդէն ամենքին յայտնի է, որ պարսկահայը ուրիշ երկրների հա- յերից ետ է, թէ բարոյակա՞ն, թէ նիւթական և թէ կրթութեան կողմանէ, և ոչ ոք էլ համա- լիս թէ նրա վրա ուշադրութիւն չէ դարձնում: Արդեօք ծանր չէ մեր նորընտիր հոգաբարձուաց յանձն առած պաշտօնը և մեծամեծ զոհողու- թիւնների կարօտ:— Կասկածանք չը կայ, սա- կայն նրանց ազգասիրական և յառաջդիմական գեղեցիկ եռանդը տեսնելով, իրաւունք է տալիս հաւատալու, որ բոլոր դժուարութեանց կը յաղ- թեն տոկուն համբերութեամբ, իբրև աստուածա- պաշտ և հայրենասէր հայեր, որով և մեծ անուն և մեծ յիշատակ կը թողնեն պարսկահայի սրը- տում:

Երկու շարքից աւելի է, որ երկինքում երե- լում է մի անաղին գիտաւոր աստղ. նրա սրբը կամ գէսը բուական թաւ է և երկար. նա բարձ- րանում է հիւսիսային արևմտից և թերթում է զլիւիւնը դէպի հիւսիսային արևելք: Ա՞՞ զիտե՞ քանի հարիւր տարիներ է թաւալել անհուն տա- րածութեան մէջ այդ կոմեթը՝ մինչև հասել է մեր հորիզոնին: Ընթերցող հասարակութեան արդէն յայտնի է, որ հուշակաւոր չէլիս իրա- դուրհա՞ր թիւրքաց կառավարութիւնից բռնկե- լով վան տարվեցաւ, կամ թէ ասելք վան կանչվեցաւ: Մենք լսեցինք, որ վանի մահմե- դականութիւնը նրան փառաւոր ընդունելու- թիւն է արել, այնպէս որ եթէ հայոց հերոսնե- ըրից, օրինակի համար, Արամը և Տիգրանը կեն- դանանային, հայերը նրանց այդպէս լաւ չէին ընդունիլ: Բայց մենք չենք նախանձի այդ ըն- դունելութեան, թող չէլիսը եթէ կը բարեհաճի Աֆրիկայի անապատները գնալ, այն ժամանակ աֆրիկացի սևամորթ և վայրենաբարոյ մուսուլ- մաններինց աւելի փառաւոր ընդունելութիւն կը գտնէ:

Արարկատականի նահանգապետ Եմիրը այժմ գտնվում է պարսից և թիւրքաց սահմանի վրա. նա գնացել է պարսից այն կողմերում ունեցած բնակներին նայելու, այլ և նոյն սահմաննե- լում քիւրդերից կողողած և թշուառացրած պարսից հպատակներին մի կերպով անդորու- թիւն տալու համար, որովհետեւ երկու տարի է որ այդ կողմերի թէ քրիստոնեայ և թէ պարսիկ աղբարնակութիւնները սովի և քիւրդերից քա- ջանքների մէջ են: Պարսից կառավարութիւնը այժմ սկսել է մտնաւոր խնամք տանել նոյն անբարեբաղաների վրա, որպէս զի նրանց կե- ցութիւնը դիրանայ:

Ընթերցողին ծանօթ պէտք է լինի Միանդու- արի անցեալ տարուայ աւերումը և կոտորածը քիւրդերի ձեռքով: Այդ ամբողջ շարագործու- թեան թեղադիր էր համարվում և արգէն մե- ղադրվում էր մի պարսկահպատակ քիւրդ իշխան Ջէլի աղա անուամբ, որ նոյն իսկ պարսից ծա- ույութեան մէջ էր: Այդ քիւրդ իշխանը յայտ- նի համարձակ անցնելով քիւրդերի կողմը, ոչ միայն նրանց զրգուել էր և առաջնորդել, այլ անձամբ հրամանատարութիւն էր արել իբրև զլիւստար ապստամբապետ, որ Միանդուար գի- ղաքաղաքը խպառ կործանեն և նրա բնակիչ- ները սրից անցկացնեն: Համանակ անցնելուց յետ յիշեալ շարագործը դարձաւ պարսից հոգն անցնելով յանդիսի էր իրան արդարացնելու, իրան կառավարութիւնը, որ լաւ ստուգել էր նրա տմարդի արարքը, բռնելով բանապակից և ամսոյս սկզբին նրան մահուան դատապարտեց: Գալիքէժի զինուորական հրապարակում Ջէլի ա- ղան կապվեցաւ մի թողնութիւն բերանը, ինչպէս յայտնի է թողնութիւն բերանը դէպի վեր է ցցված լինում և երբ ուրախից զահիճը պատրոյը ձե- ուին մօտենալով նրան պայթեցրուց, մի ակն- թարթից յետ Ջէլի աղայի ամբողջ մարմինը մասնաշաղի կտորներ դառնալով, վայր թափվե- ցան հրապարակի վրա ի տես բազմաթիւ ժո- ղովրդեան, որ եկած էր ականատես լինելու: Նրա մարմին թէ մասերը և թէ ոսկերտիքն այնպէս մանր յոշտոված էր, որ միայն մի սը-

րունքն էր ամբողջ մնացել վառօդի հակայա- կան ցնցուածից. նրա գանգն անգամ փշրվելով ուղեղի զանգուածը խմորի պէս վայր էր թա- փուել, իսկ արիւնը սրակված էր պատերին. ասա արժանի պատիժ և ասա այս է բոլոր չա- րագործների փառքը:

Մենք լրագրներում մի քանի անգամ կար- դացինք այն լուրերը, որպէս թէ Պարսկաստա- նում մտերիս և ժանտախա եղած լինի, բայց որ- քան մենք գիտենք և որքան էլ ստուգեցինք Պարսկաստանի ոչ մի կողմում դրանցից ոչ մէկը չէ երևացել: Հունձը արդէն հասնելու վրա է, գարին հնձվում է, որ եթէ մտերիս էլ լինի, այսուհետև ոչինչ վեաս չէ կարող տալ: Միայն մի բան կայ ցաւալի, լսեցինք որ Համադանի և Բիրմանշահի կողմերը մարդահալած տիֆը ար- ծարձվելով, բազմաթիւ զոհեր է տանում:

Արմենակ

Ի ԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Յրանխադի քիմիկոս Պատեօր մէկ գիւտ ա- բաւ, որ քաղցող մարդը կարող է ունենալ թու- նաւոր մարդու յատկութիւններ. նա իր կաթիլքը հաստատում է մի շարք գործնական փորձերով: Մարդուս թուրքը, որ 12 ժամ չէ կերել, եթէ ներս կաթիցները ճաղարի, նապաստակի, չան և այլ կենդանիների արեան մէջ, թունաւորում է նրանց: Պատեօր այդ նրանով է բացատրում, թէ այն մարդը, որ երկար ժամանակ կերակուր չէ ընդունել, ստամոքսային թթուն գոյացնում է թուրք մէջ պարապիտներ, որոնք թունաւոր են լինում մի քանի կենդանիների համար: Հէնց որ մարդը կը կերակուրի, թուրք իսկուց կորց- նում է իր թունաւոր ներգործութիւնը:

«Temps» լրագրի խօսքերով, Գուրկանում, Ամերիկայում գուրս է զայլս մէկ ամառայր, որ հրատարակում և խմբագրում է մի տասն և երկու տարեկան ազգիկ: Մէկ հրատա- րակիչ Բօստօնում սպագրից և կազմեց քսան և վեց ժամում Տնիսոս բանաստեղծի հեղինա- կութիւնների վերջին մասը: Ահա թէ ինչ արա- ղութեան է հասել կհաւքը Նոր-Ալխարհում:

Բիրմանցում փախճանիցաւ յայտնի մար- դասէր, միլիոնատէր սեր Մէղէն: Նա հասարակ բանուր էր, և նորհա իր եռանդի և խելքի, դարձաւ վերջը խոշոր գործարանատէր Բիրմանգա- մում: Մեր Մէղէն իր ձեռք բերած անաղին կարու- ղութեան վրա նայում էր, որպէս իրան յանձնված մէկ բարիքի վրա, որը նա պարտաւոր է յօրուս ընդհանուր գործածելու: Նա հիմնում էր ազգատա- նացիներ, որամոցներ, հիւանդանոցներ, ուսումնա- րաններ, մէկ մեծ ազգի շինել տուց քաղաքի բնա- կիչների համար և ինքն ամեն սեսակ միջոցներ էր գտնում ազգատ մարդկութեանը օգնելու համար: Նա երբեք ընդհանուր ստորագրութիւններ չէր հաւաքում իր խոշոր հանրօգուտ հիմնարկու- թիւնների համար, և միայն այն ժամանակն էր մի բան սկսում, երբ անհրաժեշտ միջոցներ ու- ներ այդ բանի համար: Մի և նոյն ժամանակ հիմնելով բարեգործական ընկերութիւններ, ին- քն երբեք չէր հսկում նրանց վրա, թողնելով այդ գործերը ուրիշներին, որոնք պարագայների և աշխատանքի պէտք ունեին: Հանրօգուտային կարելի է անուանել մարդկութեան ճշմարիտ բարեկամ, որ շատ հազիւ է պատահում կապի- տալիսաների մէջ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 յուլիսի: Կօվնօից «Голосъ» լրագրին հաղորդում են յուլիսի 10-ից Այրվեցաւ այստեղի փոխադարձ կրեդիտի ընկերութեան բնակարանը: Կաս- սան, պարամոնրհակները և բոլոր զօկու- մենտները ազատված են:

ՍՕՖԻԱ, 9 յուլիսի: Հաւատացնում են, որ Յանկօվին և Սլավէյկօվին թոյլ է տուած ապրել Բօլշարիայի բոլոր նահանգական քաղաքներում բացի Սօֆիայից և Տիրնօ- վօից:

ՏՈՒՆԻՍ, 10 յուլիսի: Կերտուհի բնակիչ- ները մի ազգաբարձութեամբ գիմեցին արա- բական ցեղերին, հրաւիրելով նրանց ապա- տամբիլի Քրանխաղցիների գէմ: Ապստամբ- ների ոյժերը 20,000 մարդ են համարում:

ԽՈՒՄԱԿԻ—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՐՈՒՆԻ